ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Թիվ 191

26 սեպտեմբերի 2019թ.

Լոռու մարզի մարզպետ

Պարոն Ա.Ղուկասյանին

Եղեգնուտի համայնքապետարանը Ձեզ է ներկայացնում համայքնի ավագանու թիվ 19 և 20 որոշումները:

Առդիր՝ 3 էջ:

Համայնքի ղեկավար՝ Մ.Հովհաննիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Եղեգնուտ համայնք, հասցե 3 փ. N 2
հեռախոս 6-83-37
էլ. փոստ yeghegnut.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

« 26 » սեպտեմբերի 2019 թվականի N 19-Ա

## «Բերքի Տոն 2019» տոնակատարությանը 20.000 դրամ փոխանցելու մասին

Հիմք ընդունելով Լոռու մարզպետի 23.09.2019թ.-ի թիվ 01/105.4.1/06863-2019 գրությունը

Համայնքի ավագանին որոշեց.

Համայնքի 2019թ.ի բյուջեի բաժին 08, խումբ 02, դաս 04, հոդված 4819 նախատեսված միջոցներից «Բերքի Տոն 2019» տոնակատարության աշխատանքներն իրականացնելու համար 20.000 դրամ, որպես նվիրատվություն փոխանցել Հայբիզնեսբանկի «Վանաձոր» մասնաճյուղ «Լոռու մշակույթ, սպորտ, երիտասարդություն» հիմնադրամին ՀՎՀՀ 06942354, h/h 1150004569920100 հաշվեհամարին:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| | | | |
| Աղաջանյան Գառնիկ | | | |
| Գալստյան Սեյրան | | | |
| Գրիգորյան Լիդիյա | | | |
| Կարապետյան Գրիգոր | | | |
| Պողոսյան Արթուր | | | |
| | | | |

Համայնքի ղեկավար՝ ____________ Ս.Հովհաննիսյան
անուն ազգանուն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
գ Եղեգնուտ
հեռ. 6 83 37 էլ. փոստ՝ yeghegnut.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ու Մ

« 26 » սեպտեմբերի 2019 թվական, թիվ 20-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 02-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Եղեգնուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 11-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Եղեգնուտ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Աղաջանյան Դավիթ | | | |
| Դալստյան Սեյրան | | | |
| Գրիգորյան Լիդիյա | | | |
| Կարապետյան Գրիգոր | | | |
| Պողոսյան Արթուր | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ Մ. Հովհաննիսյան

(ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Կ.Տ.

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Եղեգնուտ համայնքի ավագանու
2019 թվականի սեպտեմբերի 26 -ի N 20-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Անուշ Վալոդի Աղաջանյան ---- քսան հազար դրամ, սոց. օգնություն
2. Նարեկ Հենրիկի Պողոսյան ---- քսանհինգ հազար դրամ, սոց. օգնություն
3. Մարիամ Սարիբեկի Աղաջանյան ---- տասնհինգ հազար դրամ, երեխայի ծննդյան գումար

Ընդամենը՝ վաթսուն հազար դրամ:

ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ (ստորագրություն) Կ.ԱՎԵՏԻՔՅԱՆ (անուն, ազգանուն)